



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



у-5 № 3

511



2 000

514

286



1
т-61
15
227

ԽԱԶ Ե ԵՐՋԱՆԿԱՂԻՔԻ ԱԾ

ԲՈՅՏ Լ. ՏՈՒՄԱՅՅԱ.

1060
41342

Երկրորդ տպագրութիւն

9013

ՎԱԴԱՐՃԱԳԱՏ

Տպագրան Մայր Աթոռով Ս. Էջմիածնի

1902

18**

9309

ի՞նչ է երջեն կոթի ինչ

Ի՞նչ է երջանկութիւնը, որո՞ք են
նորա էտական պայմանները, ինչ է պահան-
ջուռամ իրօք երջանիկ լինելու համար աշ-
խարհիս վրայ—ահա Հարցեր, որո՞ց պատաս-
խանը փորձել են տալ բոլոր իմաստասէրնե-
րը՝ սկսած ամենահին ժամանակներից։ Երջա-
նիկ ապրելու ցանկութիւնը միշտ յատուկ է
եղել մարդկանց, այդ ցանկութիւնը միշտ էլ
կունենան նորա, ուստի և բարոյագիտութեան
մէջ միշտ բնականաբար ամենակարեսր տեղը
պիտի ունենան երջանկութեան գաղափարը
և երջանկութիւնը պայմանաւորող հանդա-
մանքների վերաբերեալ ինդիրները։

Բայց միթէ դարերի ընթացքում յա-
ռաջ խաղացող քաղաքակրթութիւնը մեղ մին-
չև այսօր ցոյց չէ տուել, թէ որո՞ք են ճշ-
մարիտ երջանկութեան պայմանները, թէ ինչ

Дозволено Цензурою 25 Июля 1902 г. г. Тифлисъ.

28228

227-2001

պիտի անենք, ինչպէս պիտի ապրենք, որ երշանիկ լինինք։ Քրիստոնէի համար դժուար չէ այդ ցուցումները գտնել երկնաւոր Ուսուցչի վարդապետութեան մէջ, եթէ միայն նա ճշշմարտապէս հաւատում է, որ Փրկչին հետեւով անպատճառ հասնելու է երջանկութեան։ բայց ովզ չէ տեսնում, որ մարդկութիւնը գեռշատ հեռու է կեանքից, որ առաջարկում է նորան Քրիստոս, ով չի խոստովանիլ, որ գեռ Աւետարանի ուսումը չէ մեր առաջնորդը, որ երջանիկ ապրելու համար մենք ընտապին չենք որոնում, ինչ որ ցոյց է տալիս Փըրկիչը։ Մենք կառավարուում ենք մեր առօրեայկեանքումմի ուրիշ վարդապետութեամբ, որ ոչինչ առնչութիւն չունի Քրիստոսի վարդապետութեան հետ, այդ երկու ուսումը միմեանց մինչ այն աստիճան հակառակ են, որ կարող ենք հաստատ ասել թէ մարդ մէկին հետեւով՝ անպատճառ միւսի հակաս ակ է գործում։ Սակայն Քրիստոսի ուսումն այնքան պարզ է և այնքան համոզիչ, որ նորան չհետեւովնորանով չառաջորդուելումիայնմարդկութեան կուրութիւնն է առացուցանում։

Քրիստոսի այդ մաքուր ուսման ջերմքարողին է և աշխարհի ուսման զօրաւոր հակառակորդը՝ ուսու աշխարհահոչակ վիպասան և իմաստառէր և Տոլմտոյը, որի հայեցքն երջանկութեան մասին յառաջ ենք բերում այստեղ։

Քրիստոս ճշմարտութիւն է ուսուցանում; ասում է Տոլմտոյը, և եթէ վերացական ճշշմարտութիւնը ճշմարտութիւն է, ճշմարտութիւն իը լինի այն և իրականութեան մէջ։ Եթէ Աստուծոյ հետ ապրելը միակ ճշմարիտ, երջանիկ կեանքն է ինքն ըստ ինքեան, այդ կեանքը ճշմարիտ է, երջանիկ է և այստեղ, երկրի վրայ, ինչ էլ որ պատահի։ Քրիստոս ասում է, որ իւր աշակերտները պիտի հալածուին իւր ուսման համար և պէտք է համրերեն ու դիմանան աշխարհի հալածանկքներին։ բայց նա չէ ասում, թէ իւր ուսմանը հետեւով նորա աւելի զրկանքներ կը կրեն, քան աշխարհի ուսմանը հետեւելով։ ընդ հակառակը նա ասում է թէ աշխարհի ուսման հետեւովները անբաղդ կը լինին, իսկ իւր ուսման հետեւովները երջանիկ կը լինին։ Քրիստոս ասում

է, թէ հենց աշխարհօրէն ձեռնտու է չհոգալ աշխարհի կեանքի մասին:

Եթէ վերացականապէս քննելու լինինք այն խնդիրը, թէ աւմ վիճակն աւելի լաւ կը լինի՝ Քրիստոսի աշակերտների թէ աշխարհի աշակերտների, չենք կարող շտեմնել, որ Քրիստոսի աշակերտների վիճակն աւելի լու պիտի լինի հենց այն պատմառով, որ նորա ամէնքին բարի անելով, մարդկանց մէջ ատելութիւն չեն զարթեցնի: Քրիստոսի աշակերտները՝ չար չգործելու պատճառով, միայն չար մարդկանցից կարող են հալածուել. իսկ աշխարհի աշակերտներին ամէնքը կը հալածեն, որովհետեւնցա կեանքի օրէնքը մաքառման, այսինքն միմեանց հալածելու օրէնքն է: Չարշարուելու պատահականութիւնը միհնոյնն է թէ Քրիստոսի և թէ աշխարհի աշակերտների համար. զանազանութիւնն այն է միայն, որ Քրիստոսի աշակերտները պատրաստ կը լինին չարչարուելու, իսկ աշխարհի աշակերտները ամէն հնարդութ կը դնեն չարչարանքից խոյս տալու համար. Քրիստոսի աշակերտները չարշարուելիս պիտի մտածեն, որ իրենց չարչարուելն հար-

կաւոր է աշխարհի համար, իսկ աշխարհի աշակերտները չեն իմանայ, թէ ինչի համար են չարչարուում: Վերացականապէս գատելով՝ Քրիստոսի աշակերտների վիճակն աւելի ձեռնութու պիտի լինի աշխարհի աշակերտների վիճակց:

Այս բանն ստուգելու համար թող ամէն մարդ միտը բերէ իւր կեանքի բոլոր ծանր բողէները, այն բոլոր մարմնաւոր և հոգեկան տառապանկները, որոնց ինքը ենթակայ է եղել, և հարցնէ ինքն իրեն՝ յանուն ինչի է ինքը ենթարկուել այդ բոլոր գժբաղդութիւններին, յանուն աշխարհի, թէ Քրիստոսի ուսման: Թող ամէն անկեղծ մտրդ լաւ միտը բերէ իւր կեանքը, և նա կը տեսնէ, որ երբէք ոչ մի անգամ նա չէ տանջուել Քրիստոսի ուսումնը կատարելուց, այլ մեծ մասը իւր կեանքի գժբաղդութիւններից յառաջ է եկել նորանից, որ ինքը հակառակ իւր հակումներին՝ հետեւել է իրեն կաշկանդող աշխարհի ուսմանը:

Իսկապէս մենք բոլորս աշխարհի ուսման նահատակներ ենք, բայց չենք տեսնում այդ-

ուսումը գործադրելու բոլոր վտանգներն ու
նեղութիւնները, որովհետեւ կարծում ենք,
թէ մեր այդ ուսման համար կրած բոլոր զլրա-
կանքներն անհրաժեշտ են:

Մենք մի անգամ հաւատացել ենք, որ
այն բոլոր գժբաղդութիւնները, որ մենք
ստեղծում ենք մեզ համար, մեր կեանքի ան-
հրաժեշտ պայմաններն են, ուստի և չենք կա-
րողանում հասկանալ, որ Քրիստոս հենց այն
է ուսուցանում, թէ ինչպէս ազատուենք մեր
գժբաղդութիւններից և բաղդաւոր ապրենք:
Մենք պէտք է գէթ մեր մոռի մէջ հրաժա-
րուենք այս սխալ հասկացողութիւնից և ա-
ռանց կանխակալ կարծիքի մեզ ու մեր շուր-
ջը նայենք, որպէս զի կարող լինինք կշռադ-
տել, թէ որ կեանքն է բաղդաւոր:

Մարդկանց մի մեծ խմբի մէջ, մա-
նաւանդ քաղաք տեղերում, ուշ գարձրէք
այդ յօգնած, վրդովուած, հիւանդուտ դէմքե-
րին և յետոյ յիշեցէք ձեր կեանքը, յիշեցէք
ուրիշների կեանքը, որի մանրամասնութիւն-
ները ձեզ ծանօթ են. միտ բերէք այն բոլոր
բռնի մահերը, բոլոր ինքնառպաննութիւնները,

որոնց մասին դուք լուած կլինիք և հարցրէք,
թէ յանուն ինչի են տեղի ունենում այդ-
բոլոր տառապանքները, տանջանքն ու յու-
սահատութիւնները, որ ինքնառպաննութեանց
են հասցնում: Եւ դուք կը տեսնէք, որ տա-
ռապանքների ինը տասներորդականը մարդիկ
քաշում են յանուն աշխարհի ուսման, որ
այդ բոլոր տառապանքները պէտք չեն և կա-
րող էլն զինել, որ մարդկանց մեծ մասը
աշխարհի ուսման նահատակ է:

Եթէ քննելու լինինք մարդկանց կեանքը,
սկսած հարստից մինչև վերջին աղքատը, կը
տեսնենք որ գոցանից ոչ ոք գոհ չէ իւր վի-
ճակից, ոչ ոք բաւական չէ համարում իւր
ունեցածը, այն, ինչ որ անհրաժեշտ է ճա-
նաշուում՝ աշխարհի ուսման համեմատ: Ամէն
ոք չարչարուում է, իւր բոլոր ոյժերը գործ է
գնում ձեռք բերելու համար այն, ինչ որ
իրեն պէտք չէ իրօք, բայց որ պահանջում է
նորանից աշխարհի ուսումը և որի զինելը
նորա համար անբաղդութիւն է: Եւ հենց որ
ձեռք բերուի այդ պահանջուածը, նորանից
էլի ու էլի նոր բաներ կը պահանջուին ան-

վերջ—Սիսիչոսի աշխատանք, որ մարդկանց կեանքն է խորտակում։ Բոլորն էլ չարչարուում են իրենց ունեցածն աւելացնելու համար։ 300 ունեցողը տանջուում է 400 ձեռք բերելու ու համար, 400 ունեցողն անպատճառ ուշգում է 500 ունենալ կը և նույն էլ ուժից վեր աշխատութեամբ ծանրացնում են իրենց առանց այն էլ ծանրացած կեանքը, իրենց հոգին ամբողջ տալիս են աշխարհի ուսմանը։

Բայց գուցէ այդպիսի կեանքն ինքն ըստ ինքեան բազդաւոր է։

Եթէ չափենք այդ կեանքը այն բանի չափով, ինչ որ մարդիկ միշտ երջանկութիւն են համարել, կը տեսնենք որ այդ կեանքը ստուտիկ անբազդ է։ Իրաւ, որոնք են երկրաւոր բազդաւորութեան գլխաւոր պայմանները, այն պայմանները, որոնց մասին ոչ ոք չի վիճել։

Երջանկութեան առաջին պայմաններից մեկը, որ ամէնքն էլ ընդունում են, այնպիսի կեանքն է, երբ մարդ բնութիւնից կտրուած չէ, այսինքն՝ բաց երկնքի, արեի լոյսի աակ, թարմ օդում ապրելը և հաղորդակցութիւն-

երկրի, բոյսերի, կենդանիների հետ։ Այս բանից զորկ լինելը բոլոր մարդիկ միշտ էլ մեծ անբազդութիւն են համարել։ Բանտարկեաներն ամէնից աւելի են զգում այս զըրկանիքը։ Այժմ տեսնենք աշխարհի ուսման համեմատ ապրող մարդկանց կեանքը։

Որքան շատ յաջողութիւն են գտել նորա ըստ աշխարհի ուսման, այնքան աւելի զորկ են երջանկութեան այս պայմանից։ Որքան բարձր է նոցա ձեռք բերած աշխարհային երջանկութիւնը, այնքան քիչ են տեսնում նորա արեի լոյսը, գաշտեր ու անտառներ, վայրի ու ընտանի կենդանիներ։ Շտերը նոցանից—կանաքը գրեթէ բոլորը—ծերանում են, իրենց կեանքում հազիւ մի-երկու անդամ տեսած լինելով արեի ծաղումը և առաւօտք, իսկ դաշտ ու անտառ տեսնում են միայն ճանապարհ գնալիս կառքի կամ վագոնի պատուհանից, լսում են գորա միայն կառքերի, մերենաների, նուագարանների ձայներ, տեսնում են միայն գործուածքներ, քարեր, մարդու ձեռքով մշակած փայտ են, մի խօսքով խսպառ գրկուած են կենդանի բնու-

թեան հետ որ և է առընչութիւն ունենալուց։
Երջանկութեան երկրորդ աներկբայելի
պայմանն է աշխատանքը, նախ՝ սիրած և
ազատ աշխատանք, երկրորդ՝ փիղիքական
աշխատանք, որ ախորժակ է բաց անում և
հանգստացնող խոր քուն բերում։

Այս պայմաննիցն էլ մոռոգիկ այնքան ա-
ւելի դուրկ են, որքան ըստ իրենց կարծեաց
մեծ երջանկութեան են հասել՝ աշխարհի
ուսմոն համեմատ։ Աշխարհի բոլոր բազգա-
ւորները, չինովնիկներն ու հարսւոտները, կամ
կալանաւորների նման բոլորովին զբկուած են
աշխատանքից և ապարդիւն մաքառում են
հիւանդութեանց դէմ, որ յառաջ են գալիս
փիղիքական աշխատանքի բացակայութիւնից,
և աւելի ապարդիւն՝ իրենց յազթող ձանձրոյ-
թի դէմ («ապարդիւն», որովհետեւ աշխա-
տանքը միայն այն ժամանակ է ուրախարեր,
երբ անշուշտ հարկաւոր է, իսկ նոցա ոշինչ
պէտք չէ) կամ իրենց համար ատելի գործ
են կատարում («ատելի» որովհետեւ՝ ոչ ոք իւր
աշխատանքից գոհ չէ և դէմ այնպիսի հա-
ճութեամբ չէ աշխատում, ինչպէս մի դռնա-

պոն, որ տան առաջի ձիւնն է մաքրում։ Յու-
լոր այս բազգաւորները կամ իսպառ զուրկ են
աշխատանքից կամ իրենց չփրած աշխատան-
քըն են անում, այսինքն՝ տաժանակիր աշխա-
տանքի դատապարտուածների վիճակն ունին։

Երջանկութեան երրորդ հաստատուն պայ-
մանն ընտանիքն է։ Եւ գարձեալ մարդիկ որ-
քան մեծ աշխարհային յաջողութիւն են
գտնում, այնքան աւելի հեռանում են այս
երջանկութիւնից։ Նորա մեծ մասամբ անա-
ռակ են և գիտակցաբար հրաժարուում են
ընտանիքի տուած ուրախութիւնից, ենթար-
կուելով միայն նորա անյարմարութիւններին։
Եթէ անառակ չեն, երեխաները նոցա համար
ուրախութիւն չեն, այլ բեռլ։ Եթէ երեխա-
ներ էլ ունին, զրկուած են նոցա հետ հա-
զորդակցութիւն ունենալու ուրախութիւնից։
Նորա իրենց օքէնքների համաձայն պէտք է
երեխաներին տան բոլորովին օտարմարդկանց,
ոկղում օտարազգիների, իսկ յետոյ գաս-
տիարակների, այնպէս որ ընտանիքը նոցա
միայն վիշտ է տալիս երեխաներ, որոնք փոք-
րուց իրենց ծնողների նման անբազդ են լի-

նում և որոնք ծնողների համար միայն մի զգացմունք են ունենում, այն է՝ նոցա մահն են ցանկանում, որպէս զի ժառանգութիւն ստանան։ Նոքա բանտում փակուած չեն, բայց նոցա կերանքի հետեւանքները ընտանիքի վերաբերութեամբ աւելի տաժանելի են, քան բանտարկուածների ընտանիքից զրկուած լինելը։

Երջանկութեան չորրորդ պայմանն է ազատ, սիրով հազորդակցութիւն աշխարհիս բոլոր բազմատեսակ մարդկանց հետ։ Եւ դարձեալ որքան բարձր տատիճանի են համոււմ մարդիկ այս աշխարհում, այնքան աւելի զրկուած են լինում բազդատօրութեան այս դըլիսաւոր պայմանից։ Որքան բարձր, այնքան նեղ ու սահմանափակ է մարդկանց այն շրջանը, որոնց հետ կարելի է հազորդակցութիւն ունենալ, և այնքան ստոր են իրենց մօտաւոր ու բարոյական զարդացմամբ այդ կախարդական շրջանը կազմող մարդիկ։

Վերջապէս երջանկութեան հինգերորդ պայմանն առաջնութիւնն է և մահն առանց հիւանդութեանց։ Եւ դարձեալ որքան բարձր են կանգնած մարդիկ հասարակաց սանդուղքի

վրայ, այնքան տւելի զուրկ են նոքա բաղդաւորութեան այս պայմանից։ Վերցնենք, օրինակի համար, միջին հարստին ու իւր կնոջը և միջին գիւղացուն ու իւր կնոջը, և կը տեսնենք, որ գիւղացին ու իւր կինը՝ չնայելով իրենց խեղճ ապրուստին ու ծանր աշխատանքին, աւելի առաջ են, քան հարստատն ու իւր կինը։

Քրիստոսի ուսումը կատարելը գժուար է։ Քրիստոս ասում է, ով ուզում է հետեւ ինձ, թող թողնէ տուն ու տեղ ու իւր մերձաւորներին, և նա կ'ստանայ այս աշխարհում գոյց հարիւրապատիկը և բացի դորանից՝ յաւիտենական կեանք։ Եւ ոչ ոք չէ հետեւում Քրիստոսին։ Խակ աշխարհի ուսումն ասում է, թող տունդ, արաերդ, և զբայրներիդ, հեռացիր գիւղից և գնա հօտած քաղաքը։ Եւ ոչ ոք այս գժուար չէ համարում։ Ոչ միայն քաղաք գնացող որդիքը, այլ և նոցա ծնողները գժուար բան չեն համարում այդ։ Նոքա մինչեւ անդամ խորհուրդ են տալիս իրենց որդոցը քաղաք տեղափոխուել, նոցա թուում է, որ այդ ոչ միայն հարկաւոր է, այլ և լաւ է ու բարոյական։

Կարելի էր հաւատալ, թէ Քրիստոսի ուշ
ուսմը կատարելը դժուար է և տաժանելի,
եթէ աշխարհի ուսումը կատարելը շատ հեշտ
լինէր, և անվտանգ, և ախորժելիք Բայց չէ
որ մենք հակառակն ենք տեսնում:

Մի ժամանակ եղել են Քրիստոսի նա-
հաւակներ, բայց իբրև բացառութիւն. 1800
տարուան ընթացքում կամայ և աւամայ նա-
հաւակների թիւը հաշուում են 380 հա-
զար, բայց հաշուեցէք աշխարհի նահաւակ-
ներին -- և Քրիստոսի մի նահաւակին կընկնի
աշխարհի ուսման 1,050 նահաւակ, որոց
տանջանքները հարիւրապատիկ սոսկալի են:
Միայն այս դարու պատերազմներում սպա-
նուածների թիւը հաշուում են մինչև երե-
սուն միլիոն հոգի:

Զէ որ դոքա բոլորը աշխարհի ուսման
նահաւակներ են, որովհետեւ եթէ մարդկու-
թիւնը Քրիստոսի ուսմանը հետեւ, մարդիկ
միմեանց չէին սպանիլ:

Պէտք չէ անպատճառ նահաւակ դառնալ
յանուն Քրիստոսի, այդ չէ քարոզում Քրիս-
տոս նա ուսուցանում է, թէ պէտք չէ չար-

չարուել յանուն աշխարհի սուտ ուսման:
Քրիստոսի ուսումն ունի խորին բնազան-
ցական իմաստ, Քրիստոսի ուսումը հանրա-
մարդկային խորհուրդ ունի. Քրիստոսի ու-
սումն ունի և պարզ, գործնական իմաստ ա-
մէն մի մարդու կեանքի համար: Այդ իմաստը
կարելի է արտայայտել այսպէս, Քրիստոս ու-
սուցանում է մարդկանց յիմարութիւններ
չանել: Այս է Քրիստոսի ուսման շատ պարզ,
բոլորին մատչելի իմաստը:

Քրիստոս ասում է. մի բարկանայ, ոչ
որի քեղանից ստոր մի համարիր — այդ յի-
մարութիւն է: կը բարկանաս, ուրիշներին կը
զրկես՝ վնասը քեզ կը հասնի: Ելի ասում է.
չարի փոխարէն չար մի հատուցանիր, թէ չէ
չարը քեզ վրայ կը դառնայ, առաջուանից էլ
վատթար կերպավ: Եւ դարձեալ ասում է.
մարդկանց օտար մի համարիր միայն այն
պատճառով, որ նոքա որիշ երկրում են ապ-
րում և ուրիշ լեզուով են խօսում: Եթէ դու
նոցա թշնամի համարես, նոքա էլ քեզ թշնա-
մի կը համարեն — վնասը քեզ կը հասնի: Ու-

ըեմն այս բոլոր յիմարութիւնները մի անիր,
և քեզ համար աւելի լաւ կը լինի:

Քրիստոս կոչում է մարդկանց գէպի ջրի
աղբիւրը, որ նոցա շատ մօտիկ է: Մարդիկի
պապակուռում են ծարաւից, ցեխ են ուսում,
միմեանց արիւնն են խմում, բայց նոցա ուս-
սուցիչներն ասել են, թէ կը կորչեն, եթէ
դնան Քրիստոսի ցոյց տուած աղբիւրի մօտ:
Եւ մարդիկ հաւատում են նոցա, տանջուռում
են ու մեռնում ծարաւից՝ ջրի կողքին, և
չեն համարձակում մօտենալ նորան: Բայց բա-
ւական է միայն հաւատալ Քրիստոսին, թէ
նա բարիք է բերել երկրի վրայ, հաւատալ,
որ նա մեզ ծարաւիներիս կենդանի ջրի աղ-
բիւր է տալիս, մօտենալ նորան, և մենք կը
տեսնենք, թէ ինչ նենդաւոր է աշխարհի ու-
սուցիչների խարէութիւնը, և թէ ինչ անմիտ
է մեր տառապանքը, քանի որ այդքան մօտ է
մեր փրկութիւնը: Բաւական է որ ուղղամը-
տութեամբ ու պարզութեամբ ընդունենք Քր-
իստոսի ուսումը, և մեզ համար ակնյայտնի
կը լինի այն սոսկալի խարէութիւնը, որով ապ-
րում ենք ամէնքս և իւրաքանչիւրը մեղանից:

Սերնդէ սերունդ մենք աշխատում ենք
ապահովել բռնութեամբ մեր կեանքն ու մեր
սեպհականութիւնը: Մեզ այնպէս է երեսում,
թէ ամենամեծ իշխանութիւնը և ամենամեծ
սեպհականութիւնը մեր կեանքի երջանկու-
թիւնն է: Մենք այնպէս ենք ընտելացել այս
բանին, որ Քրիստոսի ուսումը, թէ մարդու
բաղդաւորութիւնը չի կարող կախուած լինել
իշխանութիւնից ու ստացուածքից, թէ հա-
րուսոք չի կարող երջանիկ լինել, մեզ երեսում
է իբրև գսհաբերութեան պահանջ յանուն
ապագայ բարիքների: Քրիստոս մեզանից զոհ
պահանջել չէ էլ մատծում: Նա, ընդհակա-
ռակին, ուսուցանում է մեզ չանել այն, ինչ
որ վատ է, այլ անել այն, ինչ որ լաւ է մեզ
համար այստեղ, այս կեանքում Քրիստոս՝ սի-
րելով մարդկանց, ուսուցանումէ հեռու մը-
նալ բռնութեամբ անձն ապահովելուց և սեպ-
հականութիւնից նոյնպէս, ինչպէս որ սիրելով
մարդկանց՝ քարոզում է հեռու միալ կռուից
ու արբեցողութիւնից:

Մենք այն սիսալ համոզմնենքն ունինք,
թէ ուրիշ մարդկանց գէմ մաքաւելով կարող

Ենք մեր կեանկըն ապահովել։ Մենք այնպէս
ենք ընտելացել այս խարէութեանը, որ չենք
էլ նկատում այն բոլորը, ինչ որ կորցնում
ենք այդ պատճառով։ Իսկ կորցնում ենք
ամէն բան—մեր բոլոր կեանքը։ Մեր ամբողջ
կեանքն անց է կենում կեանք ապահովելու,
կեանքի համար պատրաստուելու հոգսերով,
այնպէս որ էլ կեանք ընաւ չէ մնում։

Եթէ լաւ քննենք մեր կեանքը, կը տես-
նենք, որ այն ամէնը, ինչ որ անում ենք իբր
թէ մեր կեանքն ապահովելու համար, մենք
անում ենք ոչ թէ կեանք ապահովելու հա-
մար, այլ նորա համար, որ գորանով զբաղուե-
լով մոռանանք, որ մեր կեանքը երբէք ապա-
հովուած չէ և չէ էլ կարող ապահովուած
լինել։ Բայց գեռ բաւական չէ, որ մենք խա-
րումենք մեզ և խորտակում ենք մեր խակական
կեանքը երեւակայականի համար, այլ յաճախ,
ձգտելով գէպի ապահովութիւն, խորտակում
ենք հէնց այն, ինչ որ ուզում ենք ապահո-
վել։ Ֆրանսիացիք դինում են իրենց կեան-
քըն ապահովելու համար 70 թուին, և այդ
ապահովելուց հարիւր հաղարաւոր ֆրանսիա-

ցիք են կոտորուում։ միւնոյն բանն են անում
բոլոր սպառազինուող ազգերը։ Հարուսա մար-
դը ապահովում է իւր կեանքը փող դիզելով.
փողը դրաւում է աւազակին, որ սպանում է
նորան։

Քրիստոսի ուսումն, թէ կեանքը կարելի
չէ ապահովել, այլ պէտք է միշտ, ամէն բոպէ
մեռնելու պատրաստ լինել, աւելի լաւ է,
քան աչսարհի ուսումն, թէ պէտք է կեանք
ապահովել։ աւելի լաւ է, ուղինեան այդ եր-
կու գէպըումն էլ մահուան անխուսափելի
լինելը և կեանքի անապահովութիւնը մի և
նոյնն է մնում, բայց ենքը կեանքը, Քրիստոսի
ուսման համեմատ, գործ չէ դրուում կեանք
ապահովելու ունայն զբաղմունքի վրայ, այլ
աղատ է լինում և կարող է տրուել մի, իրեն
յատուկ նպատակի, այն է բարիք գործել ան-
ձին և ուրիշներին։ Քրիստոսի աշակերտը աղ-
քատ կը լինի, այն, այսինքն նա կը վայելէ
Աստուծոյ տուած բոլոր բարիքները։ Նա չի
խորտակիլ իւր կեանքը։ Եւ ինչ է նշանակում
աղքատ, այդ նշանակում է, որ նա քաղա-
քում չի ապրիլ, այլ գիւղում; տանք չի նստիլ,

այլ կաշխատէ դաշտում, անտառում, կը տեսնէ արեի լոյսը, երկիր, երկինք, կենդանիներ, գլուխ չի կոտրիլ, թէ ինչ ուտէ ախորժակ գրգռելու համար, այլ օրը երեք անգամ կը սովածանայ, չի թաւալ տայ փափուկ բարձերի վրայ և չի մոտածիլ, թէ ինչպէս ազտառուի անգնութիւնից, այլ կը քնէ, երեխաներ կունենայ, կապրէ նոցտ հետ, ազատ հողդակցութիւն կունենայ բոլոր մարդկանց հետ և, որ գլխաւորն է, իւր չկամեցած բանը չի անիլ, ապագայի համար երկիւղ չի ունենայ, կը հիւանդանայ, կը տանջուի, կը մեռնի բոլորի նման, բայց անտարակյա կապրի տելի բաղդաւոր, քան ուրիշները:

Պէտք է վերականգնել բոլոր չապականուած մարդկանց յասուկ այն գաղափարը, թէ երջանկութեան անհրաժեշտ պայմանը ոչ թէ պարապութիւնն, այլ աշխատանքն է, որ մարդ ձանձրանում, նեղուում է առանց աշխատութեան, Պէտք է մոռանանք մեր վայրենի նախապաշարմունքը թէ չաշխատող հարուստ բաղդաւոր է, Քրիստոս չեր կարու այնպիսի մարդիկ երեակայել, որոնք աշխա-

տութիւնը նզովք համարէին, ուստի և միշտ հասկանալի է համարում ինքն ըստ ինքեան, թէ իւր աշակերտը աշխատում է, Եւ ասում է նա, եթէ մարդ աշխատի, աշխատութիւնը կը կերակրէ նորանց Քրիստոս քարոզում է, թէ իւրաքանչիւր ոք ամենալաւ կեանքը կունենայ, եթէ հասկանայ իւր կոչումը—ուրիշներից աշխատանք չպահանջէ, ոյլ ինքը միշտ աշխատի ուրիշների համար, Քրիստոս ցոյց է տալիս, որ մարդ ապահովում է իւր մնունդը ոչ թէ ուրիշներից խլելով, այլ ուրիշների համար պիտանի, օգտակար լինելով։ Ուրքան մի մարդ աւելի պիտանի լինի ուրիշների համար, այնքան աւելի ապահովուած կը լինի նորագոյութիւնը։ Քրիստոսի ուսման անգործադրելի լինելու դէմ արած այն առարկութիւնը, թէ եթէ ես չվաստակեմ ինձ համար ու վաստակած չպահեմ, իմ ընտանիքը պահող չի լինի՝ արդարացի է միայն գատարկապորտ, անօգուտ, ուստի և վնասակար մարդկանց վերաբերութեամբ։ Քրիստոս ասում է, որ աշխատութիւնը մարդու կեանքի անհրաժեշտ պայմանն է և որ աշխատութիւնը բա-

րեք է տալիս մարդու։ Ուստի սեպհական
կամ ուրիշի աշխատութեան պառավներն ու-
րիշ մարդկանցից խնայելը արդելք է լինում
մարդու բարիքին։ Սեպհական աշխատանքն
ուրիշներին տալը նպաստում է մարդու բա-
րիքին։

Թէ Քրիստոսի և թէ աշխարհի ուսմամբ
մարդուն ուրիշներն են պահում, ուտեցնում;
խմեցնում։ Միայն Քրիստոսի ուսմամբ մարդ-
աշխատում է ինըն ուրիշներին ծառայել,
ուրիշներին որքան կարելի է օգտակար լի-
նել, բոլորի համար պիտանի լինել, որպէս
զի իրեն պահպանեն, ուտեցնեն, խմացնեն;
Եւ միշտ մարդիկ, որքան էլ չար լինին,
խնայելով կը կերակրեն ու կը պահպանեն
իրենց համար աշխատողին։

Ուրեմն ի՞նչպէս ապրելն է խելացի ու-
լու, աշխարհի ուսման թէ Քրիստոսի ուս-
մանը հետեւլով։



ՀՀ Ազգային գրադարան



NL0596955

